

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԱԾՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ՆՅՈՒԹԵՐ ԱԽԱՂԵԽԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԵՆԵՐՅԱԼ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՅԱԳԱՐՅԱՆ

Ախալցխա անունը (վրացերեն ახალციხე — Ախալցիխե) նոր բերո է նշանակում: Հայկական և վրացական աղբյուրներում հիշատակվող Սամգիսեն է¹, մոսոխենեի կամ մեսխեի երկիրը, շրտեղ անհիշելի ժամանակներից ի վեր ապրել են հայերն ու վրացիները: Միջին դարերում Սամգիսեն հայտնի էր սաաթարեկո (աթարեկություն) անունով²: XIII դարի երկրորդ կեսին Անի լաղաթի պարոններից մեկը, Սահիր Դիվանը, ձևոք բերելով Կարս քաղաքը, իր իշխանությունը տարածեց նաև Ախալցխայի վրա, ամուսնանալով տեղի իշխանի դստեր հետ³:

Սամգիսի աթարեկությունն ընդարձակ տարածություններ է ունեցել իր իշխանության ներքո և սահմանակից է եղել Կարնո շրջանին և Կարսին: Քարթլիս-Ցխովրեբայի շարունակությունը կազմող XV—VXIII դդ. մի անանուն պատմիչի աշխատությունից իմանում ենք, որ (Սամգիսի) «աթարակը տիրում էր... մինչ Կարսի (Կարի) սահմանն (և) Ա(ր)զրումի կողմի Գուրջի Բողազի այսկույս (գտնվող մասին)»⁴:

1334 թ. վրաց ռեորդի V-ը Սամգիսեն վերամիավորեց Վրաստանին, բավականին երկար ժամանակով: Հայերեն մի ձեռագիր ավետարանի հիշատակագրությունից իմանում ենք, որ 1396 թ. Ախալցխայի աթարեկը եղել է Իվանեն⁵:

Բազմաթիվ տեղեկություններ ունենք այն մասին, որ XV դարի առաջին կեսին Ախալցխայի բնակիչներն ապրել են դառն օրեր: Երկիրն ասպատակող թուրքական ցեղերը մի քանի անգամ կոտորած և գերակրություն են կազմակերպել, բնակչությանը տարել են օտար երկրներ իրեն ստրուկ վաճառելու:

Դեպքերին ժամանակակից պատմագիր Թովմա Մեծոփեցին, իր աշխատություններից մեկում, որ վերաբերում է Հենկ-Թեմուրի արշավանքների պատմությանը, գրում է, որ Կարա-Յուսուֆը 1416 թ. գրավում է Ախալցխան և բազմաթիվ գերիներ է վերցնում և նրանց թշուր է Վասպուրական ու Տարոն վաճառելու: Սակայն չբավոր հայերը քչերի համար կարողանում են փրկանք վճարել և գերությունից ազատել: Մնացածներին տանում են Արարիա, Եգիպտոս և այլ տեղեր, բարձր գներով վաճառում ստրկության⁶:

Ախալցխայում գրված մի ձեռագիր ավետարանի հիշատակարանի մեջ կարդում ենք՝

«...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի վաղատուն... յերկիրս Ախալցխոյ, ի վանքս պարոն Յակոբայ, ի մեծ թուխս հայոց ՊՄԷ (1438), ընդ Հովանեաւ սուրբ հրեշտակապետին, ի ժամանակիս յորում Շահռումն երեկ ի վերայ Սֆանդարին, և նա փախեաւ և զնաց մինչև Սևաստ

1 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի. քննական հրատարակություն Հայկ Պերպերյանի, Փարիզ, տպարան «Արաքս», 1960, էջ 37:

2 «История Грузии», ч. I, под редакцией С. Джанашия, Тбилиси, 1946, էջ 265:

3 Ա շ ո տ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 272:

4 Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, Երևան, 1936, էջ 144:

5 ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 614: Հմմտ. Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 79, Սամգիսի բառը:

6 Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ 3, Երևան, 1954, էջ 226:

(Սերաստիա — Կ. Ղ.) և բազում գաւառի տներեաց, և զբազումս յազգէ հայոց զհրի արար և երեր, բազումք ի մերկութենէ և ցրտոյ ի սարին մեռան և բազումք սովամահ եղեն»⁷:

Մանր ժամանակագրութիւններէ մեջ հիշատակութիւն կա այն մասին, որ 1444 թ. ախալ-ցիսացիները դարձյալ զերկարութեան են ենթարկուիլ⁸:

Հայերէն ձեռագրերի մի հիշատակարանից, գրված 1606 թ., տեղեկանում ենք, որ ռումանցիները «ախրեցին բոլոր աշխարհիս՝ ի Կարսայ մինչև ի դուռն Ալանաց, ի Ախալցխայ մինչև ի Քավրէլ ի (20) ամս»⁹:

Բայց շուտով թուրքերը նորից զբաղեցին Ախալցխան, այս անգամ երկար ժամանակով և այնտեղ հաստատեցին առանձին վաշախորշուն (նահանգ), որին ենթակա էին մոտակա մի քանի գավառներ: Այդ փոփոխութեան հետևանքով տեղի աթաբեկները զրեթն շտուժեցին, որովհետև նրանք նշանակվեցին փաշայութեան ղեկավար և իշխող: Այսպիսով, նախկին աթաբեկները դարձան թուրքական փաշաներ և մոտ 100 տարի շարունակեցին իշխել Ախալցխային, մինչև որ XVІІІ դ. կեսերին զրկվեցին վարչական իրավունքներից և Ախալցխայի ղեկն անցավ թուրք փաշաների ձեռքը:

Թուրքական տիրապետութեան տարիներին Ախալցխայի վրացի ազդարնակչութեան մի մասը չղիմանալով թուրքերի պատճառած անասելի տանջանքներին, բռնի կերպով իսլամութիւն ընդունեց և շուտով միաձուլվեց արևելյան նահանգներից հետզհետե Ախալցխա տեղափոխված և այնտեղ մշտական բնակչութիւն հաստատած իսկական թուրքերի հետ¹⁰:

Միջին դարերում մի քանի անգամ համարվել է Ախալցխայի հայ բնակչութիւնը մեծ և հոգեբարձր զաղթների շնորհիվ: Այդպիսի համարումներից մեկը տեղի է ունեցել XIV դարում, երբ Անիի զաղթականների մի ճյուղը հրաժարվեց Հաշտսրխան գնալուց և եկավ հաստատվեց Գորի քաղաքում և շրջապատի գյուղերում: Հետագայում գորեցիների մի մասը տեղափոխվեց Ախալցխա: Այդ է պատճառը, որ Ախալցխայի հին քաղաքի հյուսիսային ծայրամասում կառուցված միջնադարյան մի եկեղեցու պատերի արձանագրութիւնների մեջ հիշատակվում են գորեցի հայերի անուններ: Հայկական այդ փոքրիկ եկեղեցին այժմ կոչվում է Սիւրբիլիսա, նրա վրայի հայերէն արձանագրութեան բեկորները երևում են աւարեր ժամանակներում ապաշնորհ վերանորոգումների կրաշաղախ ծեփի թափված տեղերում:

Ախալցխայի հին հայերի թվի մասին տեղեկութիւն չունենք, բայց գիտենք, որ շատ են եղել և մինչև 1829 թ. ապրիլ ևն Ռաբաթի (հին քաղաքի) թաղերում, քաղաքի մերձակա մի քանի գյուղերում և Զավախրում, որն այն ժամանակ Ախալցխայի գավառամասերից մեկն էր համարվում:

Սակայն տեղի հայերի մի զգալի մասը 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կոտորվեց: Թուրքերը վախենալով, թե հայերը կօգնեն ռուսական հաղթական զորքին, իրենց նահանջի ժամանակ նրանց հետևելու տարան ղեպի Արդահան և ճանապարհին կոտորեցին: Միայն ռուսական զորքի օգնությամբ ազատվածները կարողացան վերադառնալ իրենց տները¹¹:

7 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 486:

8 Մանր ժամանակագրութիւններ 13—18-րդ դդ., հատ. 2, կազմեց Է. Ս. Հակոբյան, Երևան, 1956, էջ 515:

9 Ա շ ո տ Հ ո վ հ ա ն ի խ յ ա ն, Գրվադներ..., հատ. Բ, Երևան, 1959, էջ 70: Քաղվածքը մեջ է բերված Ս. Տեր-Ավետիսյանի Ցուցակ նոր Զուլայի հայերէն ձեռագրաց աշխատութեան 293 էջից:

10 Հայտնի չէ, թե երբևէ Ախալցխայում բնակչութիւն էին հաստատել նաև հրեաներ, որոնք, հավանաբար, մինչև թուրքերի և մոնղոլների հանդէս գալը արդեն վրացախոս էին դարձել և բազմաթիւ Դարա-Մահալայում ունեին իրենց առանձին թաղը: Կային նաև վրացախոս կաթոլիկ հայեր, որ ապրում էին քաղաքում և նրա մոտակայքի մի քանի գյուղերում (Եղե, Վալե, Արալ և այլն): Բայց երևութիւն, որանք կաթոլիկական դավանանք են ընդունել թուրքերի տիրապետութեան ժամանակ՝ XVІІ դարում՝ թուրքական հալածանքներից ազատվելու համար: Լեոնային գյուղերում կային նաև բրդեր և թարգմաններ: Այս մասին տե՛ս Экономический быт государственных крестьян в Ахалцихском и Ахалкалакском уездах Тифлисской губернии. Исследование Х. А. Вермишева: Տպագրված է Материалы для изучения экономического быта гос. крестьян Закавказского края. Том III, часть II, Тифлис, 1886, էջ 16:

11 Է և ո, Հայոց պատմութիւն, նորագույն շրջան, մասն երկրորդ, Երևան, 1927 թ. Պետական համալսարանի տպակետից, էջ 192—197:

1829 թ. Ադրիանապոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրից հետո, երբ ռուսները Կարսի բաղաժանցը, Կարսը, Բալաղևոր վերադարձնելու էին թուրքերին, այդ քաղաքներում և նրանց շրջապատում բնակվող հայերը վախճանի թուրքերի հալածանքներից և ուղեցին գաղթել և բնակություն հաստատել ուսական տիրապետության սահմաններում:

Նախապես, Կարսի առաջնորդ Կարապետ եպս. Բագրատունին և քաղաքի երեկելի անձերը՝ երեսփոխան, մահտեսի և վարժապետ, 29 ստորագրությամբ, հիմնվելով իրենց ներկայացուցիչների տված տեղեկության վրա, որոնք եկել էին ուսական սահմաններ գաղթողների համար հարմարավետ բնակավայր ընտրելու, 1829 թ. դեկտեմբերի 15-ին խնդրագիր ներկայացրին գեներալ Պասկևիչին, որպեսզի վերջինս թույլ տա Կարսի հայերին գաղթել ուսական սահմանները և «բնակել յԱխալցխայ քաղաք և ի մերձակայ գաւառսն նորին»։ Գաղթի համար նախատեսված է եղել մոտ երկու հազար տուն՝ «մինչ ցերկու հազար տունք հայոց (կամ աւելի և կամ պակաս)»:

Սակայն թուրքերի մեջ մնալու սարսափն այնքան մեծ է եղել, որ գաղթողների թիվը գրեթե քառապատկվել է և համատարած բնույթ է կրել¹²:

Դալի՛, անհրաժեշտության մասին ուսական զորքերի հրամանատար կամ Պասկևիչը 1829 թ. հոկտեմբերի 10-ին, Նիկոլայ I կայսեր ղեկուցագրի է ներկայացրել և հետևյալն է գրել (բերում ենք քաղվածաբար)։

«...Բայագետում երկու հազար հայ էր կռվում մեր զինվորների շարքերում, էրզրումում քրիստոնյա բնակչության մեծ մասը ընդառաջ եկավ դիմավորելու մեր զորքերի շարասյուններին իրենց հոգևոր առաջնորդների հետ միասին, Կարսում հայերից կազմված էր մի գումարտակ 800 մարդուց բաղկացած, որի հեծյալները սահմանն էին պաշտպանում ասպատակություններից: Սրանց ընտանիքների թիվը, որոնց անխուսափելի վտանգ է սպառնում, կարող է հասնել մինչև 10 հազարի:

Այսու հանդգնում եմ խնդրել Ձերգ կայսերական մեծության ամենաողորմած թույլտվությունը, ինձ իրավունք շնորհելու մասին, այդ ընտանիքներին բնակության համար հող հատկացնելու վրաստանում և հայկական մարզում, իսկ եթե դրանք (այդ հողերը — Կ. Ղ.) չբավականացնեն նրանց տեղափոխելու՝ նաև (տեղավորել) Կովկասյան մարզում (Հյուսիսային Կովկասում — Կ. Ղ.): Այս մարդկանց բնակեցումը թեև սկզբում կպահանջի զգալի ծախսեր, բայց դրանք, անկասկած, հետագայում առատությամբ կհատուցվեն այն շահույթներից, որոնք սպասելի են նրանց աշխատասեր և արդյունադործ դասակարգից:

Իմ կարծիքով, գաղթականներին իբրև նպաստ կլոր հաշվով, բավական կլինի ամեն մի ընտանիքին 25 ուրլի արծաթով, որ կկազմի մեկ միլիոն ուրլի թղթադրամ բոլոր գաղթականության համար»¹³:

Ռուս պաշտոնեության կազմած տեղեկագրում, որ վերնագրված է «Ведомость о числе христианских семейств перешедших из Турецких пашалыков в Российские пределы», թուրքիայից եկած հայ գաղթականների թվի մասին ասված է.

1. Էրզրումից գաղթել են 7298 ընտանիք, որոնց մեծ մասը (5000 ընտանիք) եկել տեղավորվել են Ախալցխայում և նրա փաշայության սահմաններում: 1050 ընտանիք բնակություն են հաստատել Բորչալուի դիստանցիայում և Ծալկայի շրջապատում, իսկ մնացածները՝ Փամբակի և Շորագյալի (Շիրակ — Կ. Ղ.) դիստանցիաներում:

2. Արդահանից գաղթած 67 ընտանիք տեղավորվել են Ախալցխայում:

3. Կարսից գաղթել են 2264 ընտանիք, որոնք բնակություն են հաստատել Փամբակի և Շորալայի դիստանցիաներում:

4. Դարձյալ Կարսից գաղթող 260 ընտանիք բնակություն են հաստատել Հայկական մարզի Թալինի մահալում:

5. Բայագետից գաղթել են 4215 ընտանիք և բնակություն հաստատել Հայկական մարզի Գողչա (Սեանա — Կ. Ղ.) լճի շրջապատում և Բաշ-Ապարանում (Ապարան — Կ. Ղ.)¹⁴:

12 Լ. Մեկիբսեյ-Բեկ, Կարսի հայ գաղթականների 1829 թ. գեներալ Պասկևիչին ուղղած գրության բնագիրը: «Տեղեկագիր» ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, 1940, № 3, էջ 37—40:

13 «Акты, собранные Кавказской археографической комиссией», том VII, Тифлис, 1878, էջ 830:

14 «Акты...», том VII, էջ 847:

Այսպիսով, այս տեղեկագրի համաձայն, Բուրբուխյից դադթել են ընդամենը 14.014 տուն հայեր:

Մեր կարծիքով, ուստի պաշտոնեություններից զուտ միայն վերոհիշյալ թվերը, զաղթական հայերի ընտանիքների մասին, միանգամայն ճիշտ են, որովհետև հիմնական հաշվառումն այն ժամանակ կատարվել է ընտանիքներով, իսկ անձերի թիվը՝ բոլորովին հաշվի չի առնվել: Վերոհիշյալ տեղեկագրի ծանոթության մեջ ասված է, որ զաղթողների անձերի թիվը պարզված չէ, եթե ընտանիքը հաշվի 6 անձից, բոլոր զաղթականները կլինեն 84.000 մարդ և ավելի: Այդտեղ անձերի թիվը քիչ է հաշված, որովհետև հնում ընտանիքները շատ ավելի բազմաանդամ են եղել, քան թե երբեք են ուստի պաշտոնյաները:

Ավելի ստույգ թվական տվյալներ է մեջ բերել Հովսեփիմ Պելամյանցը իր մի հոդվածում: Նա գրում է, որ «էրզրումից, Բայբուրդից և Բայազեդից... 90000 հոգի այր, կին, երիտասարդ, ծեր, տղա և աղջիկ, որոնց հետ հետո միացան 5000 հոգի էլ Կարսից, զուրի կանգնած Կարսպետ արքեպիսկոպոսը, 1830 թվականի մայիսի 10-ին, թողեց Օսմանյան երկիրը... Շատ և շատ նեղություններ կրելով հանապարհին, ամբողջ շարաթներով և ամիսներով Արփաչայ և Կարս գետերի եզերքներին զանազան ծորերում և հովիտներում մնալուց հետո, այդ ահագին բազմությունը յոթն ամսվա միջոցում հետգհետե վերջապես հասավ Ռուսաստան»:

Ծանոթագրության մեջ Հ. Գեղամյանցը գրում է, որ «Պ. Ջազուրսկին (Записки Кавказского отделения русского географического общества, VIII) զաղթողների թիվը գնում է 14.000 տուն կամ 90.000 հոգի, որին համաձայն են մեր Ախալցխայի զավառական Էստավարության արխիվի պաշտոնական թղթերից հանած թվանշանները»¹⁵:

Ջանազան հեղինակներ տվել են բոլորովին այլ թվեր զաղթող ընտանիքների և անձերի վերաբերյալ, բայց դրանցից և ոչ մեկը ճիշտ չէ¹⁶:

Հետաքրքիր է, թե այդ զաղթականության ուր մասն է գնացել Ախալցխա և ուր՝ քեր են եղել էրանք:

Վերևում մեջ բերած պաշտոնական տեղեկագրից իմացանք, որ Ախալցխա բաղաբում և նրա փաշայությունում տեղավորվել են 5060 կարնեցի և 67 արդահանցի ընտանիք:

Հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Գրուս ք. Աղանյանցը: Նա գրում է, որ զաղթող «կարնեցիների թիվը 3000 տուն էր, իսկ կաթուղիկներինը՝ 300, բացի գյուղացիներից»¹⁷:

Նշանակում է, միայն բաղաբացիները եղել են 3300 տուն և սա հավանական է, որովհետև 1872 թ. բաղաբն ունեցել է 18269 բնակիչ, Ախալքալաբը՝ 3.120: Հայտնի է, որ Ախալցխան արտագաղթի պատճառով երկար ժամանակ աճ չի ունեցել, և եթե բաղաբում ընտանիքի անդամների թիվը, որ գյուղում ընտանիքի անդամներից զգալի կերպով պակաս պետք է լիներ, միջինը հաշվենք 6 մարդ, կստացվի ընդամենը՝ $3300 \times 6 = 19.800$ երկսեռ բնակչություն, այսինքն մի քիչ ավելի (1531 մարդով), քան եղել է 1872 թ.:

Վերմիշեն իր տեղեկությունները քաղելով պաշտոնական տվյալներից, գրում է, որ Ախալցխա եկողների թիվը 6000 տուն է եղել և այդ 6000 ընտանիքները բնակություն են հաստատել քաղաքում և գյուղերում, ըստ որում գյուղական բնակչության մեծագույն մասը հաստատվել է Ջավախքում, որ մինչև 1865 թ. մտնում էր Ախալցխայի զավառի մեջ և վերոհիշյալ թվականին կազմեց առանձին զավառ:

Կարնեցի զաղթականները հին բաղաբի դիմաց, Փոցիսով գետի աջ ափին, որտեղ բանջարանոցներ էին, հիմնեցին բոլորովին մի նոր բաղաբ՝ բարակուրի գեղեցիկ տներով և բաղամթիվ արհեստանոցների և խանութների շարքերով: Նրանք իրենց կառույցներում կիրառեցին Կարնե ավանդական շինարարական ոճն ու կերպարը:

Նոր բաղաբը կառուցվեց նախապես մշակված հատակագծի հիման վրա՝ ուղիղ և այն ժամանակվա համար լայն փողոցներով, սալահատակ մայթերով: Այդ պատճառով նոր բաղաբը

15 Հոգի էլ մի Գեղամյանց, Կարսպետ արքեպիսկոպոս (կենսագրություն): «Փորձ», ազգային և գրականագիտական եռամսյա հանդես, Ա տարի, № 1, Տփլիս, 1876, էջ 187:

16 Պերպերյանն իր հայոց պատմության մեջ (էջ 212) զաղթողների ընտանիքների թիվը 9000 է գրել, Հակոտիա՝ 52000 («Երևանի հայոց աշխարհին», 1862, № 2, էջ 108):

17 Ծիշտ է, Ախալցխայի մանավանդ Ջավախքի հայ գյուղական ընտանիքները մեծ են եղել, ինչպես Վերմիշեն է գրում, եղել են տներ, որոնք ունեցել են 30—35 անդամ, բայց նույնը չի կարելի ասել քաղաքի մասին, որտեղ ընտանիքի անդամների թիվը եղել է միջինը 6 մարդ: Бермиев նշվ. աշխ., էջ 38:

կոչվեց Պյան (վրի Պյան, վարի Պյան), ի հակադրություն ինն քաղաքի, որ ծուռ ու մուռ փողոցներով կառուցված էր տարեբայնորեն, առանց որևէ պլանի:

Ռուս պետությունը մեծ օգնություն ցույց տվեց հայ գաղթականներին թե՛ գաղթի ժամանակ հանապարհին և թե՛ տեղ հասնելուց հետո՝ բնակարաններ կառուցելու և գործի ձեռնարկելու ժամանակ:

Ճանապարհին գաղթականները պետությունից ստանում էին հաց, ալյուր, փոխադրական միջոցներ և, որ կարևոր է, գաղթի ճանապարհին հարձակումներից պաշտպանում էին զինվորական պահակախմբերը:

Տեղ հասնելուց հետո, ճիշտ է, գաղթականները մի առ ժամանակ մնացին բաց երկնքի տակ կամ վրանների մեջ, Ջիրիթ-մեյդանի բլրակների վրա և ուշուսի վերելքի շրջապատում, բայց շուտով նրանք պետությունից ստացան ոչ միայն դրամական օժանդակություն (380.000 ռուբլի արծաթով, անվերադարձ կերպով և 150.000 ռուբլի թղթադրամով՝ փոխարինարար), այլև արհեստավորներից շատերն ապահովվեցին գործիքներով և հումքով:

Նոր քաղաքի կառուցման համար պետությունը գաղթականներին տրամադրեց հողամասից բացի նաև շինափայտ և զանազան այլ նյութեր: Գյուղացիներին բաժանեց սերմացու: Չքաղորդ գաղթականներն ստացան նաև հաց ու ալյուր: Գաղթող ժողովուրդը պետական հարկերից և մաքսից ազատվեց 7 տարի ժամանակով¹⁸:

Գաղթականներն ամեն ջանք գործ էին դնում իրենց ինքնուրույնությունը պաշտպանելու և տեղացիների հետ չխառնվելու համար:

1831 թ. եկվոր հայերը, Կարապետ արքեպ. Բագրատունու գլխավորությամբ, դիմում ներկայացրին Կովկասի փոխարքա կոմս Պասկևիչին, որով խնդրում էին որոշ արտոնություններ Այդ դիմումն իր մեջ պարունակում էր գլխավորապես հետևյալը՝ ա) հայերի բնակած վայրերում ուրիշ ազգություններ չլինեն, բ) թույլ տրվի, որ գաղթական հայերը հիմեն իրենց ազգային դատարանը և գ) գաղթական հայերն ազատ լինեն բոլոր տեսակի հարկերից¹⁹:

Հասկանալի է, որ ցարական Ռուսաստանը այդպիսի պայմաններ չէր ուզենա ստեղծել թուրքիայից փախած հայերի համար: Ընդհակառակը, աշխատում էր տարրեր ազգություններ իրար խառնել և նրանց միջև հակասություններ ստեղծել, որպեսզի միաձուլվեցին բոլորն և չկարողանային կազմել իր դեմ:

Գաղթողների մեջ ազգային ինքնամփոփ կյանքի ձգտումն այնքան ուժեղ էր, որ երբ նոր քաղաքում սկսեցին տներ շինել, Ռաբատում և Դարա Մալայում բնակվող տեղացի հայերը ևս ուզեցին նոր տներ շինել և նոր քաղաքը տեղափոխվել: Այդ բանին եկվորները հակառակեցին, թույլ չտվին, և Կարապետ Բագրատունին պետության առաջ պաշտպանեց եկվորների տեսակետը:

Ախալցխա տեղափոխված կարնեցիները սկզբում իրենց անվանում էին գաղթական և, ինչպես ասացինք, մեծ շփում չունեին տեղացի հայերի հետ, որոնց թուրքերեն բառով եւրի հայեր էին անվանում, որ նշանակում է տեղացի²⁰: Սակայն հետագայում այդ խտրությունը վերացավ և հասարակական ու տնտեսական կյանքի ղեկը անցավ եկվոր հայերի ձեռքը: Շատ շուտով նոր քաղաքը դարձավ ընդարձակ գավառի կենտրոնը: Դեռ ավելին:

Կարնեցի հայերի շնորհիվ Ախալցխան դարձավ Կովկասի արհեստավորական խոշոր քաղաքներից մեկը:

Կյանքի նոր պայմանները նոր խնդիրներ առաջադրեցին արհեստավորների էսնաֆային կազմակերպությունների առաջ և նրանք իրենց արտագրությունը հարմարեցրին տեղացի հայ և այլ ազգի բնակչության պահանջներին: Սկսեցին պատրաստել այնպիսի առարկաներ, որոնց մասին առաջ հասկացողություն չունեին: Այսպես, օրինակ՝ տեղական կառքեր ու սայլեր, թուրքական ու աջարական զգեստներ, կոշիկներ, տեղական սիպի կացիներն ու այլ գործիքներ, որոնք տեղացիներն էին միայն օգտագործում:

Եկվոր հայերը իրենց էսնաֆությունների համար նոր կանոնադրություններ մշակեցին և Ախալցխայում հաստատվելու առաջին տարիներին իսկ գավառի արդյունաբերության, ինչպես նաև առևտրի ղեկը վերցրին իրենց ձեռքը և տեղ դարձան տնտեսական ու մտավոր կյանքին:

18 Հ. Երմիշև, նշվ. աշխ., էջ 190:

19 Вермишев, նշվ. աշխ., էջ 18:

20 Դեռևս XX դարի առաջին տասնամյակներում, երբ Կարնո գաղթից անցել էր մոտավորապես հարյուր տարի, տարիքով մարդիկ կարողանում էին զանազանել եւրիներից շատերին, թեև ոչ մի խտրություն չէին դնում նրանց միջև:

1842 թ. ձեռնարկեցին կառուցել մի բնդարձակ երկհարկանի դպրոցի շենք, որի բացումը տեղի ունեցավ 1844 թ.: Այդ դպրոցը Կարապետ արքեպիսկոպոսի Բագրատունու անունով կոչեցին Կարապետյան ուսումնարան: Բագրատունին մեծ դեր էր խաղացել Կարնո բաղարում իր առաջնորդության 22 տարիների ընթացքում, կազմակերպել էր Կարնո հայոց գաղթը, տնտեսապես օգնել էր գաղթականությանը հայոց եկեղեցու միջոցներից, ժողովրդի անունից պիմել էր սուս պետությունը ամեն տեսակ հարցերով և ամեն կերպ աշխատել էր թեթևացնել գաղթի դժուարությունները:

Նախքան Կարապետյան դպրոցի կառուցումը Կարնո բաղարում գործող Կարապետյան ուսումնարանի աշակերտները, որոնք գաղթի ժամանակ եկել էին Ախալցխա, իրենց ուսումնառությունը շարունակեցին Գարա Մահլալում գտնվող լքված մի մզկիթի մեջ, որ հետագայում որոշ ձևափոխությունների ենթարկվելով վերածվեց եկեղեցու և կոչվեց ս. Գրիգոր Լուսավորիչ²¹:

Կարապետյան ուսումնարանի հիմնադրման օրից ռուսաց լեզուն առաջին անգամ դարձավ պարտադիր առարկա:

Այդ դպրոցը մեծ դեր խաղաց Ախալցխայի հասարակական և մշակութային կյանքում, նա սովել է զգալի թվով աչքի ընկնող մարդիկ, որոնցից կարող ենք թվարկել պատմաբան-բանասեր Վալուստ Տեր-Մկրտչյանին (Միարյան), որ հետագայում, փարիզում բարձրագույն ուսումնավարտելուց հետո, այդ նույն դպրոցում նշանակվեց տեսուչ: Այդ դպրոցի սաներից են նաև ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցը, որ նույնպես հետագայում եղել է տեսուչ և ուսուցիչ Կարապետյան ուսումնարանում: Այդ դպրոցում են սովորել ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը, եկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Վահրամ Գալֆեճյանցը, Երևանի համալսարանի հիմնադիր դասախոսներ՝ մեխանիկայի պրոֆեսոր Դավիթ Հակոբջանյանը, ֆիզիկայի պրոֆեսոր Հովհաննես Նավախատիկյանը, բժշկության պրոֆեսոր, փրբարույժ Դ. Մելիճյանը և շատ ուրիշներ:

Կարապետյան ուսումնարանի տեսուչ կամ ուսուցիչ են եղել մեծանուն լուսավորիչ Խաչատուր Արմաշանի որդի Վարդանը, դրող և մանկավարժ Ղազարոս Աղայանը և պետական համալսարանի պրոֆեսոր Վահան Ռչտունին և շատ ուրիշներ:

Տեղացի հայերը հետզհետե հաճարակից դարձան եկվորների կյանքին և ենթարկվեցին մեծամասնությանը: Շուտով տիրապետող դարձան Կարնո բարբառը, նրանց սքանչելի հայկական զգեստը, ընդհանրացան նաև Կարնո սովորությունները, նիստ ու կացը, բանավոր ստեղծագործությունները և այլն²²:

Բացառություն էին կազմում միայն վրացախոս հայերը, որոնք թեև որոշ չափով հայերեն սովորեցին (մեծ մասամբ տղամարդիկ և երեխաները), բայց զգեստի և նիստ ու կացի հարցերում հետևում էին վրացիներին²³:

* * *

1955 թ., հոդային աշխատանքների ժամանակ ս. Փրկիչ եկեղեցու հիմքերի մոտ գտնվեց արձիճե մի տախտակ 23,5×26,5 մակերեսով, 15 մմ հաստությամբ և մոտ 12 կգ թաշով, որի երկու երեսն էլ ծածկված է հայերեն արձանագրությամբ²⁴:

Ինչպես պարզվում է արձանագրության բովանդակությունից, արձիճե այդ տախտակը դրված է եղել հայոց ս. Փրկիչ եկեղեցու հիմքում իբրև նոր քաղաքի հիմնադրման և ս. Փրկիչ զլխավոր եկեղեցու կառուցման հուշատախտակ:

21 Հ. Գ. Ղաֆադարյան, Եղվ. Զախ., էջ 203 և 194:


22 Ախալցխայի հայ կանայք Կարնո զգեստը, որ տեղում կոչում էին հալկական շուր, գործածության մեջ պահեցին մինչև մեր դարի 30-ական թթ., իսկ տղամարդիկ XIX դարի II կեսին սկսեցին հետզհետե չափեի կովկասահայերի արխալուղ և նույնիսկ Թիֆլիսի կինտոների զգեստը: Առաջներում Կարնո գաղթական տղամարդիկ ևս հագել են տղամարդու ջուլպա, որի վերջին կրողը թերդի (դերձակ) Վարդն էր մեր դարի 10-ական թթ.: Նրա մահվամբ էլ վերացավ այդ զգեստի գործածությունը:

23 Ախալցխան Ռուսաստանին միանալուց հետո համարվում էր Քուբայիսի նահանգի գավառներից մեկը, իսկ հետագայում Ախալցխան, ինչպես նաև նրանից բաժանված Զավախքը (Ախալքալակը) միացրին Թիֆլիսի նահանգին, որպես երկու ուսումնական գավառներ:

24 Այդ արձիճե տախտակը գտել է մի հայ բանակային և հանձնել Ախալցխայի գավառագիտական թանգարանին: Տախտակի ալստեղ ռպագրվող լուսանկարը մեզ է ուղարկել Ախալցխայի հայկական դպրոցների հայոց լեզվի և գրականության բաղմամյա ուսուցիչ և մեր դասընկեր Մամիկոն Ալբերդյանը: Նրան մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում այս բարեպատեհ առիթով:

Արճիճե տախտակի առաջին երեսի արձանագրությունը գրված է 1830 թ. օգոստոսի 15-ին, երբ նշվել է Ախալցխայի չրափման տարեդարձը և խմբագրվել է նոր բաղադր:

Տախտակի երկրորդ երեսը գրվել է 1836 թ. Նունիսի 1-ին, երբ պատշաճ պետական թույլտվությամբ սկսել են կառուցել տարիներ առաջ հիմնադրած ս. Փրկիչ եկեղեցին, թաղաքի ամենա-
երեսացոյ տեղում:




Նկ. 1. Արճիճե տախտակի Ա երեսը

Վերծանություն

Ա երես

1. Ի ժամանակս կայսերության Ռուսաց Ա (առաջնոյ) Նիկողայոսի
2. Պալովիչի պատերազմ լեալ ընդ օսմանցւոց թա-
3. Գ[ա]ւրի Բ (երկրորդի) Սուլտան Մահմուտի: Գրաֆ Պասկեւիչ
4. Ղորսպետն ուսուաց իւր ղեկաւցիւսայ ի 1828 օդ-
5. ոստոս[ի] ժե, ր[նդ] Նմին զՂարս, զԲայազիտ և զԿարին: Ի 1829 [թուին]
6. հաշտու[ի] ի[ն] եղե[ան], յետս տուան այնք: Եւ ի 1830 յուլիս ամսոյ] 1 (առաջնում ատուրն)
7. առ[ա]յնորդու[թեամ] տ[եւ]ոն Կ[ա]ր[ա]պ[է]տի արք եպ[ի]ս[կոպոս]ի Կարնոյ ք[ա]ղ[ա]թ-
[ա]յ[թ]ի
8. և զհեղականք իրր վեց հազար տուն բահանայիւք և
9. ժողովրդովք զիմեց[ա]թ յԱխալցխ[ա]յ և զայս յի-
10. շատակագիր եղաք ի ներքոյ հիման ս[ուր]ք Փրկիչ
11. եկեղեցւոյս հայոց: Ի 1850, օգոս[տոսի] 15 ատուր, հանդի-
12. սի առման ք[ա]յ[թ]ի



Նկ. 2. Արճիճե տախտակի Բ Երեսը

Բ Երես

1. Րսկ ի 1836 յամի, ի 4 յունիսի, ըստ կայսերա-
2. կան բարձր հրամանի, որ յայտնեցաւ մեզ ի նոր-
3. ին բարձր գերագանցութենէ կուսակալին համ[ա]յն
4. Վրաստանի ի պարոն Ռոզինէ Ա(առաջնոյ), կրկին մեծաւ հան-
5. դիսի[ւ] օծաւ հիմն ս[ուր]ր Փրկիչ Եկ[ե]ղ[ե]ց[ւ]մ[ի]ս ի րա-
6. զ[ու]մ մարգիւ Կ[ա]ր[ա]պետ ասպետափառ սրբազան արք-
7. եպիսկոպոսէ գաղթական հայոց Կարենոյ: Եւ յայնմ
8. օրէ սկիզբն եղեւ շինութե[ան] ս[ր]ր[ու] Եկ[ե]ղ[ե]ց[ւ]մ[ի]ս Եւ
9. այս յիշատակագիր դրեալ ի սոյն տախ-
10. տակի եղաւ ի ներքոյ հիման ս[ր]ր[ու] Եկ[ե]ղ[ե]ց[ւ]մ[ի]ս ի
11. պէտս ապագայ ժամանակի:
12. 1836: